ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
ԻԻՀ (Թեհրան), 2019թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Այցը նախատեսված էր էներգետիկայի բնագավառում հայ-իրանական համագործակցության, առաջիկա համատեղ անելիքների օրակարգը, ինչպես նաև ընթացիկ հարցերը քննարկելու նպատակով:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Կողմերն անդրադարձել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի՝ այդ թվում գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրի ծավալների ընդլայնման հարցին, ինչպես նաև քննարկվել է Իրան-Հայաստան 400 կՎտ լարման էլեկտրահաղորդման 3-րդ գծի շինարարության ընթացիկ տեմպերը, որի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2020թ. դեկտեմբերին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Հանդիպումներ են եղել ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հ. Հաերիի և «Թավանիր» ընկերության ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվել է ՀՀ և ԻԻՀ էլեկտրաէներգիայի փոխհոսքերով պայմանավորված ժամային ռեժիմների հարցը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
Այցի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության նավթի նախարարի տեղակալ, գազի ազգային ընկերության կառավարող տնօրեն Հասան Մոնթազեր Թորբաթիի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք թեմաներ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ընթացքում ստորագրված փաստաթղթեր չկան: Որոշում է կայացվել հետամուտ լինել քննարկված թեմաների պատշաճ կատարմանը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Քննարկվել է «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագրի նախագիծը, և պայմանավորվածության համաձայն՝ իրանական կողմը մինչ տարեվերջ պետք է տա իր կարծիքը նախագծի վերաբերյալ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

09.12.2019թ